РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ
Научно-Практический Центр Судебной Медицины
ДИРЕКТОР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF HEALTH
Scientific-Practical Center of Forensic Medicine
DIRECTOR

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՏՆՕՐԵՆ

0025 Հայաստանի Հանրապետություն Երևան, Մ. Հերացու փ., 5/1
5/1 M.Heraci str., Yerevan, Republic of Armenia, 0025
0025 Республика Армения, Ереван, ул. М.Гераци 5/1

Tel: (37410) 56 71 08,
e-mail: info@formed.am

7qp21-7

Թիվ 15/ℓ-025
«20» 09 2020

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 343-89, 344-23 <<տեղեկատվություն ստանալու մասին կրկնակի հարցում>> վերնագրով գրությունների կրկին ազնամ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է. <<...տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով>>:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերի համաձայն, աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում, ինչպես նաև աշխատողների անձնական տվյալներին ծանոթանալու իրավունք վերապահել միայն հատուկ լիազորություններ ունեցող անձանց, ընդ որում՝ այդ անձինք կարող են ստանալ աշխատողի միայն անձնական այն տվյալները, որոնք անհրաժեշտ են որոշակի գործառույթ իրականացնելու համար:

Վարկած A-00

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3–րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն հանրային նշանակության, ինչպես նաև բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում սահմանված տեղեկությունները և դրանց փոփոխությունները:

Այսպիսով, 2014 թվականին ՀՀ ԱՆ <<Դատաբժշկական գիտագործնական կենտրոն>> ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը, պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները չեն հրապարակվել:

ՀՀ ԱՆ <<Դատաբժշկական գիտագործնական կենտրոն>> ՊՈԱԿ-ը պատկանում է ---- <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետում նշված կազմակերպությունների ցանկին, չի հրապարակում նշված տեղեկատվությունը, կան աշխատակիցներ որոնք ազատվել են աշխատանքից և հնարավոր չէ պապիպանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետը:

Ինչ վերաբերվում է ՀՀ Արդարադատության Նախարարության <<Անձնական տվյալների պաշտպանության գործակալության>> 19.09.2019 թվականի որոշմանը, ապա այն վերաբերվում է <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3–րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան տվյալներ հրապարակելու՝ <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> ՀՀ օրենքին չկահասելու մասին, այլ ոչ թե <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի:

Հետևաբար Ձեր կողմից պահանջվելիք տեղեկատվության տրամադրումը կրկին մերժվում է: ՀԱՐԳԱՆՔՈՎ,

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ ՄՀԵՐ ԲԻՇԱՐՅԱՆ

Վարկած Ա-00